ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի
ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մարտի 14-ին ժամը 13:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երկրորդ նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 16 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի երկրորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով՝ նիստը վարում է համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի լիազորությունները ժամանակավոր իրականացնող, իրավաբանական բաժնի պետ Կ. Եսայանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը: Նիստը վարողը հայտնեց, որ նախապես հրապարակված օրակարգի հարցերից հանվել են 2-րդ և 3-րդ հարցերը՝ «Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» և «Վաղարշապատ համայնքի վարչական սահմաններում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» որոշման նախագծերը:

Վերջիններս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխանությունը որոշելու նպատակով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել են իրավական փորձաքննության, սակայն մինչ օրս փորձաքննության եզրակացությունը չի ստացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 16 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 16
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2023 թվականի մարտի 14-ի երկրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 168 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԼՈՂԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԼՐԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 19 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կարինե Եսայանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 168 որոշմամբ հաստատված հավելված թիվ 2-ի մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Ավագանու նիստին ներկայացավ ավագանու անդամ Նորայր Օհանյանը: Ավագանու անդամները դարձավ 17 անդամ:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 20 որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղեկալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի լողի մարզիչներին լրավճար սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Ռուբիկ Ենոքյան:

Ռուբիկ Ենքոյան: լրավճար նշանակում է ֆիքսված աշխատավարձ և լրացուցիչ գումար, իսկ աշխատավարձը բավարար չէ՞:

Պատասխանեց Ա. Պետրոսյան: Մարզիչների համար աշխատավարձ է սահմանված նվազագույ աշխատավարձի չափով և մասնագետներին խրախուսելու համար սահմանվել են լրավճարներ, իսկ եթե չլինի այդ լրավճարը մենք մարզիչների խնդիր կունենաք և լողավազանը կարող է չգործել: Համայնքում գործող մասնավոր լողավազաններում աշխատավարձը շատ ավելի բարձր է, ուստի հնարավոր է մասնագետներին կորցնենք:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 13
դեմ – 1
ձեռնպահ – 3

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 21 որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ոստանիկ Մարտիրոսյանը:

Ներկայացրեց հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 22 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղեկալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 23 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: